ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
21 մարտի 2017 թվականի N 44-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» N 241-Ա որոշման հավելված 36-ում «Խանոյան Սամվել» բառերը փոխարինել «Պետրոսյան Աննա» բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կից՝ ՀՀ Սյունիքի մարզի «Գեղանուշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահի գրությունը և ծնողական խորհրդի 2017 թվականի մարտի 13-ի նիստի արձանագրության քաղվածքը:

/ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2017 թ. մարտի 21
ք. Կապան

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀՀ Սյունիքի մարզի «Գեղանուշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 2017թ. մարտի 10-ին կայացած թիվ 8 արձանագրությունից

Լսեցին՝

1. ԴԽ անդամ ,ծնողական խորհրդի ներկայացուցիչ Ս. Խանոյանի լիազորությունների դադարեցման հարցը:

Դխ նախագահ Լ. Ղազարյանը հաղորդեց, որ ԴԽ անդամ, ծնողական խորհրդի ներկայացուցիչ Սամվել Խանոյանը չի կարող մնալ ԴԽ կազմում, քանի որ նրա երեխաները՝ 1-ին դասարանի աշակերտուհի Լիա Խանոյանը և 5-րդ դասարանի աշակերտուհի Մանանա Խանոյանը բնակավայրի փոփոխության պատճառով տեղափոխվել են այլ դպրոց՝ ուսումը շարունակելու:

Որոշեցին՝

1.ա/ Գրավոր տեղեկացնել տարածքային կառավարման մարմնին՝ « Գեղանուշի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ –ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմում փոփոխություններ կատարելու համար:

2.ԾԽ նախագահ Վ. Մելքումյանին՝ ԾԽ կազմից ներկայացնել անդամ՝ արձանագրության քաղվածքը ներկայացնելով տարածքային կառավարման մարմնին:

ԴԽ նախագահ /Լ. Ղազարյան/

Քարտուղար /Հ. Հարությունյան/

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀՀ Սյունիքի մարզի «Գեղանուշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ծնողական ժողովի 2017թ. մարտի 13-ին կայացած թիվ 3 արձանագրությունից

Լսեցին՝

Գեղանուշի միջնակարգ դպրոցի ծնողական խորհրդի նախագահ Վարդուհի Մելքումանը ներկայացրեց դպրոցի կառավարման խորհրդի նախագահ Լ. Ղազարյանի գրությունը՝ 10.03.2017թ. ԴԽ անդամ,ծնողական խորհրդի ներկայացուցիչ Ս. Խանոյանի լիազորությունների դադարեցման և դպրոցի ծնողական խորհրդի կազմից ԴԽ-ում ընդգրկվելու համար նոր անդամի առաջադրման մասին հարցը

Որոշեցին

Փակ քվեարկության արդյունքում

Աննա Սամվելի Պետրոսյանը / 9 կողմ, 2 դեմ, 0 ձեռնպահ/ ընտրվեց ԾԽ-ի ներկայացուցիչ՝ դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի կազմում:

Աննա Սամվելի Պետրոսյան ծնվ. 22.11.1983թ, կրթությունը՝ միջն. մասնագիտական, չի աշխատում, հասցե՝ գյուղ Գեղանուշ, Կենտրոնական փողոց, տուն 4

ԾԽ նախագահ /Վ. Մելքումյան/

Քարտուղար /Ք. Ալիխանյան/